ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ՊԵՏ

Հ Ր Ա Մ Ա Ն

30 հունիսի 2014 թվականի N 602-Ա

ք. Երևան

ՀՀ ԳՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N 176-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ N 1730-Ն որոշմանհավելվածի 15-րդ կետի 4-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2013 թվականի ապրիլի 16-ի «Ներմուծումը ժամանակավորապես արգելելու մասին» N 176-Ա հրամանի 1-ին կետում «Հանրապետությունից» բառը փոխարինել «Հանրապետության Սիչուան, Գուանգդոնգ, Տաիվան, Գոիժու, Հուբեի, Յունան, Գուանգխի նահանգներից և Հոնկ Կոնգի հատուկ վարչական շրջանից» բառերով:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ԲԱԽՉԱԳՈՒԼՅԱՆ